**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1**
**26.11.2024Թ. ԿՆՔՎԱԾ N ՋԿ-ՀԲՄԱՇՁԲ-24/5-Ա-2 ԾԱԾԿԱԳՐՈՎ**
**ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ**
**ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**

ք. Երևան «11» փետրվարի 2025թ.

Ջրային կոմիտեն, ի դեմս գլխավոր քարտուղար Ա. Ղազարյանի, որը գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Սոլիդ Քոնսթրաքշն>> ՍՊԸ- <<Նարսեր Շին>> ՍՊԸ, <<Բերդշին>> ՍՊԸ կոնսորցիումը, ի դեմս տնօրեն Ռ. Հայրապետյանի, որոնք գործում են 10.10.2024թ. կնքված համատեղ գործունեության պայմանագրի և Ընկերությունների կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2024 թվականի դեկտեմբերի 27-ի <<Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին>> N 2060-Ն որոշումը և 26.11.2024թ. կնքված N ՋԿ-ՀԲՄԱՇՁԲ-24/5-Ա-2 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 և 8.13 կետերը փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

## 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պայմանագրով նախատեսված՝ ջրատարների վերականգնման շինարարական աշխատանքներ - Արտամետի «Զույգ ցանց» ներտնտեսային ջրանցքի վերակառուցման աշխատանքների 2025 թվականի կատարման համար Պայմանագրի N 3 Հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցը շարադրել նոր խմբագրությամբ համաձայն սույն համաձայնագրի Հավելված N 1-ի:

1.2 Պայմանագրով նախատեսված՝ աշխատանքի կատարման ժամկետի հաշվարկն իրականացվում է սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից և կատարման ժամկետը սահմանվում է՝ համաձայն նախագծի 6 ամիս, որի մեջ չի հաշվարկվում 20.12.2024-31.12.2024թ ընկած ժամանակահատվածը:

## 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը: Համաձայնագիրը գործում է մինչև կողմերի կողմից սույն համաձայնագրով և Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած Կողմերի իրավունքները և պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է համաձայնագրի մեկ օրինակ:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
Ջրային կոմիտե
ՀՀ ք. Երևան, Վարդանանց 13ա
Հ/Հ 900011567386
ՀՎՀՀ 02555816
էլ. հասցե scws@scws.am
գլխավոր քարտուղար

________________ Ա. ՂԱԶԱՐՅԱՆ
(ստորագրություն)
Կ. Տ.

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**
«Սոլիդ Քոնսթրաքշն» ՍՊԸ- «Նարսեր Շին» ՍՊԸ,
«Բերդշին» ՍՊԸ կոնսորցիում
հասցե՝ ՀՀ, Արարատի մարզ, գ.Ոստան Մայիսյան 77
հեռ. +37498505040
Բանկը «Ակբա Բանկ» ԲԲԸ Արարատ մ/6
Հ/Հ 220013335272000
ՀՎՀՀ 04221502
էլ. հասցե solidconsruction@mail.ru
Տնօրեն

________________ Ռ. Հայրապետյան
Կ.Տ /ստորագրություն/

1043-25

Հավելված N 1
<<26>> նոյեմբերի 2024թ.
**N <<ՋԿ-ՀԲՄԱՇՁԲ-24/5-Ա-2>> աշխատանքների**
կատարաման գնման պայմանագրի
<< 11 >> [illegible] 2025թ.
կնքված Համաձայնագիր 1-ի
<<Հավելված N 3
<<26>> նոյեմբերի 2024թ.
N <<ՋԿ-ՀԲՄԱՇՁԲ-24/5-Ա-2>> աշխատանքների
կատարաման գնման պայմանագրի

**ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ***
**2025թ.**

ՀՀ դրամ

| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել 2025թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | **Ընդամենը Տարի** |
| 5 | 45231132/13 | ջրատարների վերականգնման շինարարական աշխատանքներ- Արտամետի «Զույգ ցանց» ներտնտեսային ջրանցքի վերակառուցման աշխատանքներ | 50 000 000 | 100 000 000 | 200 000 000 | 250 000 000 | 250 000 000 | 250 000 000 | 250 000 000 | 250 000 000 | 250 000 000 | 301 104 000 | 301 104 000 | **301 104 000** |

**Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով>>*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
Ջրային կոմիտե
ՀՀ ք. Երևան, Վարդանանց 13ա
հեռ. 010 54-02-29
Հ/Հ 900011567386
ՀՎՀՀ 02555816
Էլ. հասցե scws@scws.am
գլխավոր քարտուղար

Ա. ՂԱԶԱՐՅԱՆ
(ստորագրություն)
Կ. Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**
«Սոլիդ Քոնսթրաքշն» ՍՊԸ- «Նարսեր Շին» ՍՊԸ, «Բերդշին» ՍՊԸ կոնսորցիում
հասցե՝ ՀՀ, Արարատի մարզ, գ.Ոստան Մայիսյան 77
հեռ. +37498505040
Բանկը «Ակբա Բանկ» ԲԲԸ Արարատ մ/ճ
Հ/Հ 220013335272000
ՀՎՀՀ 04221502
Էլ. հասցե solidconsruction@mail.ru
Տնօրեն

Ռ. Հայրապետյան
Կ.Տ /ստորագրություն/